

**‘ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐՈՅԵՆՑԸ’ ՏԵՐՏՈՒՂԻԱՆՈՍԻ  
«ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ-Բ» ԵՐԿԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ**

*Հակոբ Քյոսեան*

ԺԹ դարի Արևմտահայ իրականության երևելի դեմքերից է Հովհաննես Չամուռճյանը (Տերոյենց, 1801-1888): Նրա անձը, թողած վաստակը բնորոշ հարացույցն է այն հոսանքի, որին տրվեց պահպանողական անունը: Ժամանակի կրոնական, հասարակական կյանքն անկարելի է պատկերացնել առանց նրա գործուն մասնակցության<sup>1</sup>: Տերոյենցն իր ծանրակշիռ խոսքն ասել է պատմահասարակական գիտակցության ամենատարբեր մարզերի վերաբերյալ<sup>2</sup>: Կրոնակեղեցական խնդիրներին քաջատեղյակ լինելն ու այդ խնդիրների լուծման համար նրա գործարած ճիգերը երևան են հանում խոր համոզում ունեցող, իր սկզբունքներին անձնուրաց նվիրումով փարված մարդուն: Տերոյենցի հախուռն, բորբոքուն նկարագիրը որոշարկում է աստվածաբանական այն ընթացքը, որը հայտնի է ջատագովություն անվանումով: Ուստի պատահական չէ, որ նրա աստվածաբանելու եղանակը բնորոշվում է անվերապահ և կտրուկ հակադրություններով, առարկություն չվերցնող եզրահանգումներով: Տերոյենցն իր դիրքորոշումը հաստատում է ոչ թե մերկապարանոց հայտարարություններով, այլ սրբազան ավանդության, եկեղեցու հայրերի հեղինակության վկայակոչումով: Այդ է ցույց տալիս նրա խմբագրությամբ հրատարակված «Երեւակ» պարբերականը (1857-1860, 1861-1864 թթ.), ուր տեղ գտած հրապարակումները երևան են հանում հեղինակի լայն իրազեկությունը հայրախոսական ժառանգության վերաբերյալ: Այս կապակցությամբ խիստ նշանակալից է Տերոյենցի դավանական ընդդիմախոսի, Վիեննայի Մխիթարյան միաբանության բազմաշխատ հայրերից մեկի՝ հ. Հովսեփ վրդ. Գաթրճյանի (1820-1881)՝ նրան տված հետևյալ

\* Հոդվածը ներկայացվել է 07.02.2020 թ., գրախոսվել է 02.03.2020թ., ընդունվել է տպագրության 12.04.2020 թ.:

<sup>1</sup> Նրա կյանքի ու գործունեության համապարփակ պատկերը տրված է. **Յ. Գ. Մրմըրեան**, Տասնեփններորդ դար եւ Յովի. Պրուսացի Տերոյենց, Կ. Պոլիս, 1908:

<sup>2</sup> Տերոյենցի պատմափիլիսոփայական ընկալումների լուսաբանումը տե՛ս **Ռ. Միրումյան**, Հովհաննես Տերոյենց. «Իմաստասերք հայոց» մատենաշար, Եր., 2011:

գնահատականը. «Կաթոլիկ եկեղեցիէն դուրս միակ հայը, որ ցարդ մնացած է անհաւասարելի Հռովմեական և Արեւելեան եկեղեցիներուն պատմական հմտութեանց մէջ<sup>1</sup>»:

Այսպէս, Ս. Գրոց կանոնական խնդիրների նկատմամբ իր հստակ դիրքորոշումը Տերոյենցը ցույց է տալիս Սողոմոնի «Իմաստութիւն» գրքի մասին խոսելիս: Այդ գրքի բացակայությունը Աստվածաշնչի բողոքական կանոնի մեջ առիթ է տվել Տերոյենցին՝ անրադառնալու այդ խնդրին: Իր «Այլևայլք» շարքում նա «Իմաստութեան գիրք» խորագրով նշմարի մեջ նախ բերում է բողոքականների՝ այդ մասին առաջադրած պատճառաբանությունն, ըստ որի այդ Գիրքը ոչ միայն չկա հրեից կանոնում, այլև «եկեղեցւոյ հին հայրերը հրեաներուն իբրև Աստուածաշունչ չընդունած գիրքերը չէին ընդուներ», և պնդում էին, թե՛ «մեզի ալ պէտք չէ ընդունիլ<sup>2</sup>»: Այնուհետև ցույց տալու և փաստելու նպատակով նա վկայակոչում է Որոզինեսի, Կյուրեղ Երուսաղեմացու, Օգոստինոս Երանելու անունները, որոնցով հավաստում է, թե Եկեղեցին հնուց անտի «սուրբ գիրքերը որն ըլլալը հրեաներուն հարցնելու սովորութիւն չունի»<sup>3</sup>: Առ այդ նա հղում է իր «Բանադատ» աշխատությունը: Այստեղ Տերոյենցը քննադատելով բողոքականների՝ հրեական կանոնի կույր վկայակոչումը, առ ի հաստատումն սրբազան ավանդության, հիշատակում է Ս. Գրոց՝ Թեոդոտիոնի երբայերենից հունարեն իրականացրած թարգմանությունը՝ չմոռանալով արձանագրել, թե նա «Երբայական Աստուածաշունչը բառ առ բառ յունարէնի թարգմանեց Կոմոդոս կայսեր ժամանակը, Քրիստոսի 184 կամ 85 թուին: Ասոր թարգմանածին մէջ Դանիէլի մարգարէութիւնը ամբողջ կար. Շուշանայ եւ Բէլին եւ Վիշապին պատմութիւնն ու Երից մանկանց երգն ալ մէկ տեղ առնելով, որ բողոքականներուն տպածներուն մէջ

<sup>1</sup> Տե՛ս **Յ. Մրմըրեան**, Ստուերք հին դեմքերու, Կ. Պոլիս, 1908, էջ 53:

<sup>2</sup> Տե՛ս «Երեւակ». Տետրակ կիսամսեայ. Տնօրինէ եւ յօրինէ Յովհաննէս Պրոսպի Տէր Կարապետեան Տերոյենց, 1860, է, էջ 316-317 (այսուհետև՝ «Երեւակ» հընթացս շարադրանքի):

<sup>3</sup> Այս կապակցությամբ բնութագրական է Որոզինեսի՝ Հուլիոս Աֆրիկացուն հղած նամակը, ուր Ս. Գրոց կանոնի հետ կապված տարակոյսները փարատելու համար Որոզինեսը «շեշտում է, որ Հին Կտակարանի կանոնը սահմանողը Եկեղեցին է և ո՛չ թե երբայական տեքստը». տե՛ս **Եզնիկ Ծ. Վ.**

[Պետրոսյան], Հայրաբանություն, հտ. Ա, Ս. Էջմիածին, 1996, էջ 150:

չկայ<sup>1</sup>»: Աստվածաշնչագիտական այս դիտումը նա հաստատում է հայրաբախտական վկայությամբ: Տերոյենցը նշում է, թե Որոգինեսն իր հակաճառական երկերից մեկում վկայակոչել է Դանիելի մարգարեության ԺԳ գլուխը, ինչը առաջացրել է Որոգինեսի բարեկամի՝ Հուլիոս Ափրիկանոսի տարակույսը, որովհետև վերջինիս պնդումով այդ դրվագը բացակայում է Ս. Գրոց հրեական կանոնում: Տերոյենցը մի ընդարձակ հատված է բերում Որոգինեսի առ Հուլիոս Ափրիկանոս պատասխան նամակից (թիվ 4)<sup>2</sup>, ուր կանոնի հավաստիության երաշխիք է համարվում Եկեղեցու կողմից հնուց անտի դրա որդեգրված լինելը: Այս միտքը շեշտելու նպատակով նա նկատում է, թե Որոգինեսի հիշյալ նամակը գրվել է 228-230 թթ., ուստի այնտեղ հնչած «յալիտենական սահմանները» չփոխելու մասին հորդորը կարող է վերաբերել Ա դարի վերջերին, երբ տակավին ողջ էին առաքյալները, որոնց հավանությամբ էլ Դանիելի մարգարեությունն ամբողջապես տեղ է գտել Ս. Գրոց կանոնի մեջ: Ինչպես նկատում է Տերոյենցը, Դանիելի մարգարեության նույն ԺԳ գլուխը Որոգինեսը վկայակոչում է իր Մատթեոսի մեկնության մեջ, ուր ասում է. «Հոս Դանիելի խօսքը մէջ բերինք, որ եբրայականին մէջ գրուած չէ, այլ Եկեղեցւոյ մէջ բռնուած է» (Մատենագր. Որոգինեսայ, հտ. Գ, Ե, 870)<sup>3</sup>:

Մեզանում իբրև երկրորդականոն ընկալված Սիրաքի գիրքը որպես սրբազան մատյան է վկայակոչում Որոգինեսն իր «Ընդդեմ Կելսոսի» աշխատության մեջ (գր. Է, Ապացոյցք Աւետարանի, տպագր. Միները հատ Ա, էջ 372)<sup>4</sup>: Տերոյենցը շարունակում է վկայություններ բերել Եկեղեցու կանոնահաստատ գործունեության վերաբերյալ. նա վկայակոչում է ս. Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի հին հայերեն թարգմանությունը (տպ. Վիեննա, 1832), ուր սրբազան հեղինակը կոչ է

<sup>1</sup> Տե՛ս **Յովհաննէս Պրուսացի Տերոյենց**, Բանադատ. Ս. Ս. Մատթեոսի սրբազան կաթողիկոսի Ամենայն Հայոց «Բարի մարդ եւ բարի քրիստոնէայ» անուն գրքին դէմ բողոքականներուն հանած նույնանուն գրքին վրայ քննութիւն, Կ. Պոլիս, 1860, էջ 65:

<sup>2</sup> Տե՛ս Epistula ad Julium Africanum- PG, t. 11, col. 48-85

<sup>3</sup> անդ, էջ 66-68 [Commentarium séries in evangelium Matthaei (Mt. 22,34 – 27,63) - Origenes Werke (Hrsg. E. Klosterman, Lpz., 1933, Bd. 11/GCS; 38,2); նույնը՝ Origéne, Commentaire sur l'Évangile selon Matthieu; Ed. R. Girod, Paris;1970., vol. 1, p. 140-386 (SC,t. 167) = PG, 17, 829-1600]:

<sup>4</sup> Տե՛ս Contra Celsum. Migne,PG, t. 14,col. 641-1632, նույնը՝ Ed. M. Borret, Paris,1967-1969/SC t. 132,136,147,150/:

անում խորշել Եկեղեցու շնորհունած մատյաններից, որոնցից է օրինակ մանիքեցիների հորինած Թովմայի ավետարանը (գլ. Դ, եր. 70, 71): Դիմելով Օգոստինոսի հեղինակությանը՝ Տերոյենցը նշում է, թե նա ևս Որոգինեսի «պէս յայտնի կը ցուցնէ, թէ Եկեղեցին Սուրբ Գիրքը ընտրելու համար հրեաներուն բերանը նայած չէ: «Յաղագս քաղաքին Աստուծոյ» գրքին մէջ, որ հայերէն թարգմանուած եւ Վենետիկ տպուած է 1841-ին<sup>1</sup>, տաճարին շինութենէն ետքը հրէից քահանայապետներուն ժամանակագրութեանը վրա խօսելով, կըսէ, թէ ասոնք կանոնական ըսուած գրքերուն մէջ չեն գտնուիր, այլ ուրիշ գրքերուն մէջ կան, որոց կարգն են Մակաբայեցւոց գրքերն ալ, «եւ զայսոսիկ ոչ հրեայք, այլ Եկեղեցի առ Կանոնականս ունի» (Յղ. քաղ. Աստուծոյ. ԺԸ 36): Հիշելով նույն երկի մէկ այլ տեղին՝ Տերոյենցը վկայակոչում է Օգոստինոսի այն միտքը, որ թեպետ Սիրաքն ու Իմաստության գրքերը վերագրվել են Սողոմոնի գրչին, «գիտունները անորը չըլլալը գիտեն», այդուհանդերձ «եւ զսոսին ի վկայութիւն առնու Եկեղեցի՝ մանաւանդ արեւմտեանն ի վաղ ժամանակաց» (Յաղ. քաղ. Աստուծոյ. ԺԷ 20): Այս միտքը նա հաստատագրում է նույն Օգոստինոսի «Contra Gaudentium, donastistarum episcopum» հակաճանական երկի համապատասխան դրվագի վկայակոչումով, ուր ասվում է, թե հակառակ այն բանին, որ հրեաները չեն ընդունում Մակաբայեցւոց գրքերը» ... այլ Եկեղեցին ընդունած է օգտի» (Ընդդէմ Գաուդ. դոնատ. Ա 31, թիւ 38)<sup>2</sup>: Ի հավելումն «Բանադատ» աշխատության մէջ հիշյալ երկերից բերված վկայությունների<sup>3</sup> Տերոյենցը մի վկայություն էլ բերում է մոտ 310 թ. շարադրված Լակտանտիոսի «Աստուածային սահմանադրութիւնք» (Institutiones Divinae) խորագրով երկից<sup>4</sup>: Այստեղ (գիրք Դ, գլ. 16) մի քաղվածք է բերված Իմաստության գրքի Բ գլխից, ուր ակնարկված է Քրիստոսի «սպանութեան խորհուրդը»: Այս փաստի հիման վրա Տերոյենցը եզրակացնում է, որ այն ժամանակ «այնքան հաստատութեամբ

<sup>1</sup> Տե՛ս De Civitate Dei ad Marcellianum . PL, t. 41= «Սրբոյն Օգոստինոսի Հիպոնայ եպիսկոպոսի Յաղագս քաղաքին Աստուծոյ», թարգմ. Հ. Գաբրիէլ վրդ. Աւետիքեան, հտ. Ա-Բ, Վենետիկ, 1841:

<sup>2</sup> Տե՛ս PL, t 43 = Corpus scriptorum ecclesiasticorum latinorum, vol. 53 = Bibliothèque Augustinienne. Oeuvres de saint Augustin, 2 ed. t. 32:

<sup>3</sup> Բանադատ, էջ 66-72:

<sup>4</sup> Տե՛ս Corpus scriptorum ecclesiasticorum latinorum, vol. 19:

Սուրբ Գրոց կարգը սեպուած էր այս գիրքը, որ հրեաներուն ընդունածներէն տարբերութիւն չէին տեսներ, վասն զի, կըսէ Լակտանտիոս, «այս չարութիւնը գործող հրեաները այս գուշակութիւնը պարունակող գիրքը ձեռքերնին ունէին, և որի դէմ գրուած էր նէ, անոնք ալ կը կարդային, եւ անոնց անունը կրող եւ եղեռնագործութիւններնուն հետևող յաջորդներն ալ նոյն գիրքը ամէն օր ձեռքերնին ունին, և մարգարէներուն բերնովը իրենց դէմ վճռուած դատապարտութիւնը առանց միտ դնելու կը կրկնեն, որ նոյն դատապարտութեան սոսկալի արդիւնքներուն մէկն է» («Երեւակ», անդ, էջ 317-318)<sup>1</sup>: Այս հիմամբ Տերոյենցը հաստատում է, որ այդ գիրքը կիրառվել է հրեաների կողմից, հակառակ այդ գրքի՝ Քրիստոսի հանդէպ գործադրելիք բռնության վերաբերյալ պարունակած բացորոշ ակնարկի: Այսու, քրիստոնեական եկեղեցու՝ այդ մատյանի նկատմամբ տաճած հարգանքը ամենևին չի տարբերվել հրեից վերաբերմունքից:

Տերոյենցը վկայակոչում է նոյն Լակտանտիոսին Քրիստոսի խաչելության ժամանակը որոշելիս. նա սխալ հաշվարկի հետևանք է համարում Լակտանտիոսի այն նկատումը, համաձայն որի նա «Տեառն մերոյ խաչելութիւնը Տիբեր կայսեր ԺԵ-երորդ տարին կը դնէ» («Աստուածային սահմանադրութիւնք» Դ, 10): Մինչդեռ հենվելով Ղուկ. Գ 1-ի վրա, ըստ որի Տիրոջ մկրտությունը տեղի է ունեցել Տիբերիոսի գահակալության տասնհինգերորդ տարում, և քանի որ Քրիստոս ստուգապես խաչվել է երեք բաղարջակերաց տոներից հետո, ուստի խաչելությունը տեղի է ունեցել Տիբերիոս կայսեր ԺԸ տարում («Երեւակ», անդ, էջ 358):

Տերոյենցը «Ապացոյցք անտարանական պատմութեան» հողվածում համառոտիվ բերում է ֆրանսիացի «բազմահմուտ եկեղեցական» Շասսէ արքայի «Քրիստոս եւ Աւետարան» գրքի վերաբերյալ Հեպեր Տյուբերոնի գրախոսականը (անդ, էջ 354-355): Տյուբերոնը հիշատակում է Քրիստոսի խաչելությանն անդրադարձած առաջին ջատագովների՝ Ղուկիանոս Նիկոմիդիացի քահանայի, Տերտուլիանոսի և Հուստինոս Փիլիսոփայի վկայությունները: Ի լրումն Յուստինոսի Ա «Ջատագովությունից» Տյուբերոնի բերած վկայության («ասոնք ամէնն ալ Պիղատոսի ժամանակը

<sup>1</sup> Ի դեպ, նկատենք, որ Սողոմոնի «Իմաստության» գիրքը Լակտանտիոսից շատ առաջ վկայակոչել են Հուստինոս Վկան, Կղեմես Ալեքսանդրացին և Տերտուլիանոսը. տե՛ս Христианство. Энци. т. 2, М., 1995, с. 386:

գրուած դիւանագրութիւններէն գիտէք». գլ. 76)<sup>1</sup> Տերոյենցը վկայաբերում է Տերտուղիանոսի «Ջատագովութիւնը» (գլ. 31)<sup>2</sup>, ուր հեղինակը գրում է. «Նոյն հետայն կեսօրուան ատեն ցերեկն աներեւութացաւ/ մութը կոխեց/: Յիսուսի Քրիստոսի մահուան համար այս գուշակութիւնս եղած ըլլալը չգիտցողները խաւարում մը կարծեցին այս երեւոյթը: Ետքը պատճառը չկրնալ գիտնալով, ուրացան, բայց ձեր դիւաններուն մէջ ասիկայ պատմուած կը գտնէք» (անդ, էջ 358):

Այս փաստերի բաղդատման հիման վրա Տերոյենցը միանգամայն հավանական է համարում, որ Քրիստոսի խաչելոյթան բոլոր մանրամասները իրոք արձանագրված են եղել դիվաններում, ինչը վավերացվում է Տերտուղիանոսի ըսածովն ալ, որ հռովմէական իրաւագէտ մըն էր, եւ ասով կայսերական սովորութիւններուն եւ անոր վերաբերյալ մասնավոր գործերուն շատ աղէկ տեղեակ ըլլալով, ասոր վկայութիւնը աւելի մտադրութեան արժանի է» (անդ, էջ 360): Ընդունելով Հուստինոսի և Տերտուղիանոսի վկայութիւնների վավերականութիւնը, սակայն Տերոյենցը իր տարակոյսն է հայտնում Ղուկիանոսի անձի ու նրա հեղինակած Ջատագովութեան վերաբերյալ: Նա պարզիպարզ խոստովանում է, թէ Քրիստոսի խաչելոյթան ժամանակի վերաբերյալ իբրև սկզբնաղբյուր Տյուբերոնի հիշատակած Ղուկիանոս Նիկոմեդացու անունն իրեն անհայտ է, քանզի, ինչպէս նկատում է «Ղուկիանոս Նիկոմեդացիի անունով Ջատագովութեան գիրք չեմ գիտեր, թէ հիմայ կայ մի, կամ թէ Տիւբերոն ուրիշ անուան տեղ մի այս Ղուկիանոս անունը գրած է, կամ թէ տպագրութեան սխալ է մի» (անդ, էջ 359): Մինչդեռ այն, որ Ղուկիանոս Նիկոմեդացին շարադրել է մի Ջատագովութիւն, ուր հոչակել է Քրիստոսի երկնավոր թագավորութիւնը, վկայում է Եվսեբիոս Կեսարացին (Պատմութիւն, Ը 13 Թ 6), իսկ Ռուփինոսն իր Պատմութեան մեջ մասնակիորեն վկայաբերել է այդ «Ջատագովութիւնը» (Թ 6), ուր, ի դեպ ասված է. «Որպէս վկա ձեզ բերում եմ բուն իսկ երկինքը, որ տեսնելով, թէ ինչ են անում անարգ մարդիկ երկրի վրա, կեսօրին ծածկեց իր լույսը: Փնտրեք ձեր տարեգրութիւններում և դուք կգտնեք, որ Պիղատոսի ժամանակ,

<sup>1</sup> տե՛ս Apologia. PG, t. 6, col. 327-440:

<sup>2</sup> տե՛ս Apologeticus adversus gentes. PL, t. 1, col. 257-536:

երբ չարչարվեց Քրիստոս, օրն ընդհատվեց արեգակի խավարումով»<sup>1</sup>: Ինչևէ, ծանոթագրելով Տյուբերոնի գրախոսության մեջ արծարծված Քրիստոսի խաչելության ժամանակի և դրան ուղեկցող օդերևութաբանական արտառոց ցնցումների մասին, Տերոյենցը լրացուցիչ փաստարկում է դրանց իրական լինելը<sup>2</sup>:

Հանրագիտարանային տեղեկատվության մեջ ևս դրսևորվում է Տերոյենցի՝ հայրախոսական ժառանգության իմացությունը: Այսպես, իր ընթերցողներին ցույց տալու համար, թե «սուրբ Երուսաղէմ գացողներուն վրա նշան ընելը նոր բան մը չէ»՝ գրում է. «Պրոկոպիոս Գագացի յոյն մեկնիչը, որ Քրիստոսի վեցերորդ դարուն հեղինակներեն է, Եսայեայ ԽԴ գլխոյն մեկնութեան մէջ կըսէ<sup>3</sup>, թէ քրիստոնէաներուն հին սովորութիւնն է, որ դաստակներուն եւ թեւերուն վրայ խաչ կամ Յիսուս Քրիստոս բառերուն սկիզբնագիրերը իրար փակած կտել կուտային (այսինքն՝ առաջ ասեղով ծակծկելով ձեւացնել եւ ետքը ներկել կուտային): Դիտելու բան է, որ այս բանս արդեն Պրոկոպիոսի ժամանակը, Քրիստոսի ծնանելէն 560 տարի մը ետքը, հին սովորութիւնն է եղեր: Այս սովորութիւնը յոյները եւ երոպացիները վերցուցեր են ալ նէ՛ մեր ազգը հին ասանդութիւններու ասանդապահ ըլլալով մինչեւ հիմա կը պահէ, եւ երոպացիներուն եւ յոյներուն եւ ուրիշներուն ըրած պարսաւները ականջն ալ չմտներ» («Երեւակ», 1857, հտ. Բ, էջ 351):

Տերոյենցը իր ծանրակշիռ խոսքն ասել է նաև թարգմանական գրականության բնագավառում: Հիշատակության արժանի են նրա հետևյալ երկերի թարգմանությունները. Ճոյա Մելքիորէ «Քաղաքավարութիւն կամ Ուսումն քաղաքական կրթութեան» (քառահատոր հրատ. Կ. Պոլիս, 1842, 1843), Բասքալ, «Խորհրդածութիւնք Բասքալայ ի վերայ աստուածաբանական և իմաստասիրական նիւթոց և յապացոյց ճշմարտութեան քրիստոնէական սուրբ հաւատոյ» (Կ. Պոլիս, 1844), «Ճանապարհ երջանկու-

<sup>1</sup> Տե՛ս **Филарет Арх. Гумилевский**, Историческое учение об отцах церкви, т. 1, М., 1882, с. 142:

<sup>2</sup> Ինչպես նկատում է Տերոյենցը, խավարումը հրաշք են համարում Որոգինեսն իր «Ընդդէմ Կելսոսի» երկում (գլ. Բ), Մինուտիոս Ֆելիքսը «Հոկտավիոս» գրքում: Այն այդպես է որակված «Լակտանտիոսի եւ Եսեբիոսի եւ սուրբ Հերոնիմոսի գրուածներուն մէջ»: Տե՛ս, «Երեւակ» 1858, հտ. Գ, էջ 169-170:

<sup>3</sup> Ի դեպ այս հեղինակի Եսայա մեկնությունը հունարեն և լատիներեն լեզուներով հրատ. Փարիզում, 1580:

թեան, որ է մարդս երջանկացնելու արուեստը» (Կ. Պոլիս, 1845) և այլն<sup>1</sup>: Նա կարևոր քայլեր է կատարել՝ հայացնելու Եկեղեցու հայրերի ու վարդապետների ժառանգությունը: Իր հաղորդումներից մեկում նա գրում է, թե նշանավոր հնախոյզ Դիշենդորֆը (1815-1874) Եգիպտոսի վանքերից մեկում գտել է մի հին Աստվածաշունչ, «որ Հոռոմ վատիկանեան գրատունը պահուած ձեռագրեն հին և անկէց պատուական է եղեր: Գրքին գրուիլը չորրորդ դարուն մէջ եղած կը կարծէ<sup>2</sup>»: Այս ձեռագրում Դիշենդորֆը գտել է նաև «սրբոյն Բառնաբայ կաթողիկէ թուղթը, որ Սուրբ Գրոց կարգէն դուրս է, բայց հիներուն առաջը յարգի էր: Կը գտնուէր հիմայ ալ այս թուղթիս յունարեն բնագիրը, բայց առաջին հինգ գլուխները պակաս: Այս գլուխները լատին թարգմանութեան մէջ կային, բայց անսովոր եւ անհիմանալի լեզուով»: Ծանոթագրելով այս տեղեկությունը Տերոյենցը գրում է. «Սրբոյն Բառնաբայ այս նամակը, որ շատ երկար բան մը չէ, լատիներէնէն յունարէնին պակասը լեցուած գաղիերէն թարգմանութենէ մը հայերեն թարգմանած ենք, եւ թէ որ կրօնասէր ձեռնտու մը գտնենք նէ տպագրութեամբ հրատարակելու միտք ունիմք, որ սուրբ առաքեալը իւր գրութիւնովը մեր ազգին ալ ծանօթանայ<sup>3</sup>» («Երեւակ», 1858, Դ, էջ 315-316): Այնուհետև Տերոյենցը հարում է, թե՛ «Առաքելոյ աշակերտ երանելոյն Հերմասայ «Հովիւք» ըսած գրքին ալ առաջին մասը գտաւ Պ. Դիշենդորֆ նոյն ձեռագրին մէջ գրուած, եւ խոստացած է այս գիտերուն վրայ ընդարձակ տեղեկութիւն տալու» (անդ, էջ 316):

<sup>1</sup> Տեղեկություններն ըստ Հ. Դավթյան, Հայ գիրքը 1801-1850 թվականներին. Մատենագիտություն՝ խմբագրությամբ Հ. Ս. Անայանի, Եր., 1967, էջ 281-282, 299, 311:

<sup>2</sup> Սա թերևս հնագույն հունարեն Աստվածաշունչն է, որ հայտնի է Codex Sinaiticus անունով. այն իբրև աղամանդ փայլում էր նրա իսկ հայտնաբերած մյուս՝ հունարեն ասորերեն, դպտերեն, արաբերեն ձեռագրերի թագի վրա. Codex-ի նմանատպությունն իրականացվեց Պետերբուրգում, 1862 թ. աշնանը ի պատիվ ռուսաց պետության հազարամյա տարելիցի. Tischendorf C. von Codex Sinaiticus...Tischendorf Stori and Argument Related by Himself. Aufl. 8. L., 1935, p. 31 տե՛ս Լ. Дойель, Завещанное временем. Поиски памятников письменности, М., 1980, с. 349:

<sup>3</sup> Մեզանում «Բառնաբայի նամակը» («Sancti Barnabae Epistola catholica» տվյալ թարգմանությունն այսօր անհայտ է: Ինչպես պարզվում է, հայերեն երկրորդ թարգմանությունն իրականացվել է Հովհաննես Տերոյենցի ձեռքով. այդ թարգմանությանը դարձյալ չվիճակվեց հրապարակվել կամ պահպանվել: «Նամակի» նորագույն հայերեն թարգմանությունը հին հունարենից՝ պրոֆ. Սիմոն Կրկյաշարյանի, խմբ. և ծանոթ. Միքայել եպս. Աջապահյանի «Գանձասար». Աստուածաբանական հանդես, Ը, Եր., 2010, էջ 157-210:



\*\*\*

Տերոյենցի բովանդակ կյանքը ոչ այլ ինչ էր, քան Հայ Եկեղեցու դարավոր ավանդության, սրբազան անցյալում անթեղված անկորնչելի արժեքների ջատագովում: Միայն իրեն բնորոշ անխոտոր հետևողականությամբ նա պայքարել է հայ կրոնական միտքը աղարտող տարաբնույթ հոսանքների, մասնավորաբար բողոքականության դեմ: «Բարենորոգչական» այդ շարժման մեջ էր նա տեսնում այն մեծագույն չարիքը, որը սպառնում էր խարխլել Հայ Եկեղեցու հիմքերը: Տերոյենցի գլխավոր նպատակն էր արմատախիլ անել, հեղինակազրկել այդ շարժումը: Այդ նպատակով էր պայմանավորված լատին աստվածաբանության նախակարապետի՝ Տերտուլիանոսի *Prescriptio* («Նախագրություն») երկի նրա իրականացրած հայերեն թարգմանությունը: Պատահական չէր, որ նա ընտրեց Տերտուլիանոսի հենց այս երկը: Բանն այն էր, որ տվյալ աշխատության հիմնադրույթները լավագույնս նպաստում էին այն պայքարին, որ Տերոյենցը տանում էր բողոքականության դեմ. «Նախագրություն» երկը ուղղված էր Տերտուլիանոսի օրերին աշխուժացած հերձվածողական, աղանդավորական տարաբնույթ հոսանքների դեմ, որոնք շրջանցելով Եկեղեցու սրբազան ավանդույթը, վիճարկում էին Ս. Գիրքը մեկնելու իրավունքը:

Ս. Գրոց մեկնության՝ բացառապես քրիստոնյաներին վերապահված լինելու խնդիրը Տերտուլիանոսը լուծում է ոչ այնքան իբրև իմաստասեր, որքան՝ իրավաբան: Համաձայն հռոմեական իրավունքի, երկար ժամանակ գույքից օգտվող յուրաքանչյուր անձ իրավասու է տնօրինել այն իբրև օրինական սեփականություն: Եթե մեկը վիճարկի տվյալ անձի սեփականության իրավունքը, նա կարող է վկայակոչել այդ գույքի օգտագործման վաղեմությունը՝ *longae praescriptionis possessia*: Կիրառելով իրավական այդ սկզբունքը Սուրբ Գրոց նկատմամբ՝ Տերտուլիանոսը – «մերժում է» գնոստիկների «հայցը»՝ բացատրելու այն: Ի սկզբանե քրիստոնյաների կողմից ընդունված Ս. Գիրքը կարող է մեկնվել բացառապես նրանց կողմից, որովհետև այդ լիովին համերաշխ է օրենքին: Եթե գնոստիկները հավակնում են կիրառել այն, ապա, համաձայն վաղեմության սկզբունքի, նրանց կարելի է հայտարարել մերժված կողմ: Այսու Տերտու-

դիանոսը խնդրի լուծումը ուղղակիորեն կապում է ավանդույթին<sup>1</sup>։ սրանով նրա այս մոտեցումը համապատասխանում է ս. Իրինեոսի դիրքորոշմանը։ Տերտուլիանոսի փաստարկներն աչքի են ընկնում առարկություն չվերցնող կոշտ անվերապահությամբ, արժեքների բևեռացումով, միջին ուղի բացառող կտրուկ անցումներով ու հաստատումներով։ Մտածողության այս եղանակը բնորոշ է նաև Տերոյենցին, որը բողոքականության դեմ պայքարը լավագույնս կազմակերպելու համար կանգ է առել այս երկի վրա, քանզի այն հավակնությունները, որոնք բնորոշ էին գնոստիկյան հոսանքներին, ըստ Տերոյենցի, լիովին համապատասխանում էին բողոքական վարդապետությանը։ Ուստի նա այդ վարդապետության դեմ պայքարելու պատշաճագույն միջոց է համարում այդ երկի հայացումն ինքնին։

Ինչպես նկատում է Տերոյենցը, Տերտուլիանոսի երկը նա թարգմանել է ֆրանսերենից՝ ձեռքի տակ լատիներեն բնագիրը (*De praescriptione haereticorum*. տպ. PL, t. 2, col. 9-61, նաև՝ ed. R. F. Refoul, Paris, 1957) չունենալու պատճառով («Երեւակ», 1860, հտ. է, էջ 3-12, 33-38, 65-70, 97-104, 129-134, 161-168, 193-200, 225-234, 257-263, 289-296, 321-326)։ Ներկա հրատարակության ծանոթագրությունները գլխավորաբար հիմնված են հետևյալի վրա. Квинт Септимиий Флорент Тертулиан, Избранные сочинения. Составления и общая редакция А. А. Столярова, Перевод с латинского И. Маханькова, Ю. Панасенко, А. Столярова, Н. Шабурова, Э. Юнца, М. , 1994, с. 400-404:

### ՏԵՐՏՈՒՂԻԱՆՈՍԻ

#### Նախագրությունը

Ամէն ատեն հերետիկոսները մի և նոյն օրինակաւ կը մոլորին՝ Սուրբ Գրոց միտքը ծռելով, և եկեղեցւոյ աւանդութիւնը չընդունելով, մոլորութիւննին ինչ նիւթի վրա կըլլայ նէ ըլլայ, ուստի ամէն ատեն ալ մի և նոյն փաստը անոնց դէմ զօրութիւն ունի, երբ ցուցուի, որ Սուրբ Գրոց միտքը սկիզբէն ի վեր եկեղեցին ինչպէս կը հաւատայ նէ, այնպէս հաւատալու է, և անկէց զատուողը քրիստոնէական ուղղափառութենէ զատուած և հերետիկոս է։ Վիճաբանելու այս ընդհանուր կերպին լատին փաստաբանները

<sup>1</sup> Տէ'ս **Этьен Жильсон**, *Философия в Средние века. От истоков патристики до конца XIV века.* [http. //agnuz. info/pp/wbroot/ library \(337/ 522\) index. htm](http://agnuz.info/pp/wbroot/library/337/522/index.htm)

րը բրեսքրիպցիո ըսած են, որ բառական թարգմանությամբ նախագրություն կըսուի, և հիմայ ալ դատաստանի մէջ կընդունուի: Մէկ մարդ մը անյիշատակ ժամանակէ ի վեր մէկ բան մը ունենայ ժառանգութեամբ, եւ երկարատեան անոր դէմ բան մը ըսող և վէճ մը հանող չըլլայ նէ, ետքէն ելած վէճը խափանելու համար բաւական է միայն ցուցնելը, թէ այն բանը խիստ շատ ժամանակէ ի վեր իր նախնեացը ձեռքն էր, և անոնցմէ ժառանգութեամբ իրեն հասաւ: Այս փաստն է նախագրութիւն ըսուածը: Տերտուլիանոս. Ափրիկեցի քահանայն (1) Քրիստոսի 209 թուին (2) իրեն ատենը գտնուած հերետիկոսներուն շատերուն աղանդը զատ զատ հերքելէն ետքը ամէնուն մէկէն դէմ գրեց այս Նախագրութեանց գիրքը, որ հիմակուան ամէն տեսակ աղանդաւորներուն ալ դէմ յամարելուն համար «Երեւակ» -իս մէջ թարգմանութիւնը ամբողջ կը հրատարակեմք:

### ՆԱՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Բ. Մէկ բան մը երբ որ կայ նէ, հարկաւ, վախճանական պատճառ մը ունի, որուն համար կայ եւ յատուկ ուժ մը ունի, որ իր էութիւնն է, եւ անով է, որ կայ, եւ առանց անոր չկրնար կենալ: Ամենեւին չեմք զարմանար տենդին կենալուն, որ մարդոյս կեանքը կը մաշեցնէ, եւ ցաւու եւ մահու սկիզբն է մարդու համար. իր բնութիւնն է այս: Ուստի թէ որ հերետիկոսութիւններուն հաւատքը խախտելուն եւ երբեմն բոլորովին արմատախիլ ընելուն վրայ կը զարհուրիմք նէ առանց անոնց կենալուն վրայ զարհուրելու եմք. վասն զի այս գործը արտադրելու համար գոյացած ըլլալովնին, քանի որ կան նէ հարկաւ այդ կարողութիւնը ունին: Ուստի երբ գիտեմք, որ տենդը թէ իր վախճանական պատճառովը եւ թէ իր բնութիւնովը չար է, կը վախնամք անկէց, բայց չեմք զարմանար, եւ չկրնալով անիկայ մէջտեղաց վերցնել անկէց մենք մեզ ապահովցնելու համար ձեռքերնուս եկածը կընենք: Բայց ինչո՞ համար հերետիկոսութիւններուն արդիւնքը խափանելուն տեղը, որ սաստիկ կրակով մեզ այրելը եւ յախտենական մահուան մատնելն է, անոնց կայ ըլլալուն վրայ կը զարմանամք . մեր ձեռքէն գալիքը միայն անոնց ներգործութիւնը խափանելն է:

Այլ եւ ասոնց զօրութիւնը այնքան է միայն որքան որ մենք ասոնցմէ կը վախնամք: Վախերնուս կը գայթակղիմք եւ գայթակղելովնիս ալ կը կարծեմք, որ ասոնց այս կարողութիւնը ճշմարտութենէն է: Յիրաւի թէ որ այս գէշութիւնը հաւատքնին տկար եղողներէն զատ մարդոց

վրայ կարողութիւն ունենար նէ՝ զարմանալի կըլլար: Ըմբիշներու եւ սուսերամարտներու կռիւներուն մէջ յաղթողը միշտ ամէնէն քաջը եւ անյաղթելին չըլլար. դիմացը ելլող ախոյեանը տկար ըլլալուն համար ինքը յաղթող կըլլայ: Ուստի երբ դէմը աւելի սրտոտ մը հանես՝ յաղթողը կը յաղթուի: Հերետիկոսութիւններն ալ ասանկ են. ուժով են մեր տկարութեանը ամար, հաստատուն եւ ամուր հաւատքի դէմ բան մը ընելիք չունին:

- Գ. Տկար մարդիկ ուրիշ մարդոց ինչպէս տեսնելով ալ կ'իյնան: Կըսեն եկեղեցոյ մէջ անանկ իմաստուն եւ հաստատուն եւ փորձուած մարդիկ ինչպէ՞ս մոլորութեան կողմն անցած են: Այս առարկութիւնը ընողները իրենց ըսածին պատասխանն ալ իրենք կը գտնէին: Այն մարդիկը իրենց կարծածին պէս չեն եղեր, որովհետեւ հերետիկոսութիւնը կըրցեր է անոնք գլխէ հանել:

Բայց շատ զարմանալու բան մըն է, որ փորձուած առաքինութեան տէր մարդիկ ժամանակէ մը ետքը իրենք զիրենք սուտ հանեն: Սաւուղ, բոլոր ազգին մէջէն ընտրուած մարդ, շատ չանցնիր նախանձու գերի կըլլայ, Դաւիթ, Աստուծոյ սրտին ուզածին պէս մարդ, շնութեան եւ սպանութեան մեղքերու մէջ կ'իյնայ, Սողոմոն Աստուծոյ պարգեւներովը լեցուած գերիմաստ մարդ, բայց կնիկները զինքը կռապաշտութեան մէջ ձգեցին: Միայն Որդւոյն Աստուծոյ պահուած էր մինչեւ վերջը անմեղ մնալը: Ի՞նչ կըսես, երբ եպիսկոպոս մը, կամ սարկաւազ մը, կամ այրի մը, կամ կոյս մը<sup>1</sup>, կամ վարդապետ մը, կամ նահատակ մը անհամ հերետիկոսութեան մէջ իյնայ նէ՝ ասով արդեօք հերետիկոսութիւնը ճշմարիտ հաւատք կըլլա՞յ: Մարդոցմո՞վ պիտի դատեմք հաւատքը, թէ՞ հաւատքով պիտի դատեմք մարդիկը: Հաւատացեալէն զատ իմաստուն չկայ. մեծ մարդ քրիստոնեայն է, եւ քրիստոնեայն այն է, որ մինչեւ ի մահ նոյն հաւատքին վրայ կը կենայ<sup>2</sup>:

<sup>1</sup> Այրիները, որ մէկ մըն ալ չկարգուելու ուխտ կընէին հրապարակաւ, և միշտ կոյս մնալու ուխտ ընող կոյսերը եկեղեցոյ մէջ յատուկ տեղ ունենալուն համար ասոնք հոս յատուկ կը յիշէ Տերտուղիանոս (3):

<sup>2</sup> Մոլորութեան մէջ ծնած մարդը, որ մինչեւ ի մահ մոլորութեան մէջ կը մնայ, այս կարգիս մէջ չմտներ, վասն զի իրեն հետևած մոլորութիւնը հնարողը մինչև ի մահ միևնոյն հաւատքի մէջ չէր. մինչև մոլորած ատենը ուղղափառ էր, ետքը ճամփան փոխեց: Եւ այսպէս մէկի մը հետեւողը, թէ եւ մինչեւ ի մահ յարատեւէ, ուղղափառ քրիստոնեայ չի կարող սեպուիլ:

Մարդ եղողը ուրիշ մարդուն միայն արտաքինը կը ճանչնայ, տեսածին կը հաւատայ, եւ աչքը մինչեւ ուր հասնի նէ մինչեւ հոն կը տեսէ: Միայն Աստծո աչքը ամենատես է. մարդ մարդուն երեսը կը նայի, Աստուած մարդուն սիրտը կը նայի եւ այսպէս Աստուած իրենները կը ճանչնայ, եւ ինչ բոյս որ իր հայրը տնկած չէ, կը խլէ: Վերջինները առաջիններուն մէջ կը ցուցնէ մեզի: Հոսելին ձեռքն է իր կալը սրբելու համար<sup>2</sup>, թեթեւ յարդը փորձութեան հովը փչելուն պէս կը թռչի, եւ Տեառն շտեմարանին մէջ մտած ցորենը ասով աւելի մաքուր կըլլայ: Չէ՞ մի որ Քրիստոսի աշակերտներուն շատ ալ գայթակղեցան եւ քովէն զատուեցան<sup>3</sup>: Բայց ուրիշները անոր ունեցած յարումին չպակսեցուցին: Գիտնալով, որ յԱստուծոյ է, եւ բան կենաց է, մինչեւ վերջը քովը մնացին, թէպէտ Տէրն անոնք ազատ թողած էր. ուզէին նէ կրնային երթալ: Եւ զինքը մատնողն ալ անոր աշակերտներէն մէկը եղաւ: Ասկէց ետքը զարմանալ պէտք չէ, որ Փիգելոս մը, եւ Հերմոգինէս մը, եւ Փիլետոս մը, եւ Հիմենէոս մը իր առաքելոյն քովէն զատուեցան, եւ անիկայ ձգեցին (4): Երբ կը տեսնեմք, որ քանի մի հոգի այս եկեղեցիները ձգեցին, կը զարմանամք, բայց Յիսուսի Քրիստոսի պէս նեղութիւն կրելնիս է, որ մեզի կը ցուցնէ, թէ քրիստոնեայ եմք<sup>4</sup>:

«Ոչ եթէ որպէս տեսանիցէ մարդ, տեսանէ Աստուած, զի մարդ հայի յերեսս, եւ Աստուած հայի ի սիրտս». Ա Թագաւոր. ԺՂ 7:

«Ծանեալ Տէր զայնոսիկ, որ իւրն են».. Բ Տիմոթ. Բ 19:., «Ամենայն տունկ, զոր ոչ տնկեաց Հայրն իմ երկնաւոր, խլեցի». Մատթ. ԺԵ 13:

<sup>1</sup> «Բազումք եղիցին առաջինք յետինք և յետինք՝ առաջինք». Մատթ. ԺԹ 30:

<sup>2</sup> «Որոց հեծանոցն ի ձեռին իւրում, եւ սրբեսցէ զկալ իւր». Մատթ. Գ 12:

<sup>3</sup> «Յայսմանէ բազումք յաշակերտացն նորա չոգան յետս». Յովի. Զ 67:

<sup>4</sup> Եկեղեցական հին և նոր պատմութիւնը ապացոյցներ կուտայ, որ հերետիկոսները՝ աղանդնիւն ինչ ըլլայ նէ ըլլայ՝ հաւատոյ համար նահատակելու գլուխ չունին, ուստի հաւատք քարոզելու համար միայն անանկ տեղ կերթան, ուր որ կեանքերնին ապահով է, և հալածանք մը յանկարծակի ելլէ նէ՝ հաւատքնին կը ծածկեն և կազատին: Պատճառն այն է, որ հերետիկոսները միշտ, «ճշմարտութիւն կը բնտոնեմք», կըսեն, երբէք,, գտանք,, չեն ըսեր, ուստի ամէն ատեն գտանք կարծածներնուն վրայ վստահ չեն, զուցէ այսօր ճշմարիտ կարծածնին վաղը սուտ ելլէ, և ասանկ կեղակարծ հաւատքի մը համար կեանքը վտանգի մէջ դնելը յիմարութիւն է: Ուստի կալվինեաններուն սուրբ ըսած մարդոցը, որոց պատմութիւնովը Վարք սրբոց մը շինած ունին, պատմութիւննին ուղղափառ եկեղեցոյ պատմուած նահատակներուն պատմութեանը չեն նմանիր, ամէնն ալ ուրիշները մեռցնելու ելած, և առաջարկութիւննին ջքալելով բռնուած և պատժուած

Իր սիրելի աշակերտը ըսաւ. Մեզնէ ելան, բայց մեզնէ չէին. թէ որ մեզնէ ըլլային՝ մեր հետը կը մնային»:

- Դ. Տեառն մերոյ եւ անոր առաքեալներուն պատգամները միտքերնիս բերեմք, որ հերետիկոսութիւններ ելլելիք գուշակելով անոնցմէ փախչիլ պատուիրեցին մեզի, եւ որովհետեւ ասոնց կայ ըլլալուն վրայ չեմք զարմանար, պէտք չէ զարմանալ ասոնց հետեանքներուն վրայ, որոնցմէ փախչիլ հրամայուած է մեզի: Տերն մեր մեզի իմացուց, որ ոչխարի մորթով ծածկուած շատ մը յափշտակող գայլեր պիտի գան: Ոչխարի կաշին ի՞նչ է, բայց եթէ քրիստոնէութեան արտաքին կերպարանքը: Ո՞վ են այն յափշտակող գայլերը, եթէ ոչ խաբեբայ ոգիները, որ Յիսուսի Քրիստոսի ոչխարները յափշտակելու համար պահուրտած կը կենան: Ո՞վ են սուտ մարգարէները, եթէ ոչ մոլորութեան վարդապետները: Սուտ առաքեալները ո՞վ են, եթէ ոչ Աւետարանն ապականողները: Թէ հիմայ եւ թէ ամէն ատեն նեոերը ո՞վ են, բայց եթէ Յիսուսի Քրիստոսի դէմ ապստամբող մարդիկ: Հիմայ ալ անանկ հերետիկոսներ կան, որոց իրենց մոլորութեան թունովը եկեղեցին ապականելը ետքի ատենները նեոին հալածանքին չըլսուած անգթութիւններովը եկեղեցին պատահոտելէն վար չըմնար: Այս տարբերութիւնը միայն կայ մէջերնին, որ հալածանքով նահատակներ, իսկ հերետիկոսութիւնով ուրացողներ կեցին:

Առաքելոյն խոսքին նայելով պէտք է որ հերետիկոսութիւններ ելլեն, որպէս զի թէ հալածանաց կատաղութիւնովը եւ թէ հերետիկոսութե-

---

մարդիկ են: Մեկ Քրամէր (5) ունին, որ իր կենդանութեանը չորս հինգ անգամ հաւատքէ հաւատք փոխուեցաւ, գլխատուելու ժամանակը մեռնելէն ազատելու համար հռոմէական ըլլալու խօսք տուաւ, և երբ տեսաւ, որ ասով ալ ազատուելիք չկա նորէն բողոքական դարձաւ և անանկ մեռաւ (**Պատմ. Բարեկարգ. հատոր. Բ**, թղթ. 577) [5ա]: - Պետք է գիտնալ, որ այս գիրքը նախանձախնդիր բողոքականի մը յօրինած ըլլալուն նշանը հետը կը բերէ. Քրամէրի մահուանը վրայ մէկ երկու պարագաներ ալ աւելցնելով, որ ստոյգ ըլլան ալ նէ միայն իր մահուանը վճիռ տուողին դէմ կուսակիցները ատելութեան գրգռելու համար եղած կըլլայ: Ճշմարիտ եկեղեցիէն դուրս ճշմարիտ մարտիրոս չըլլար:

- <sup>1</sup> «Առ ի մէնջ ելին, այլ ոչ էին ի մէնջ, զի եթէ ի մէնջ էին, ապա առ մեզ մնային». Ա Յովհ. Բ 19:
- <sup>2</sup> «Ձգոյշ լերութիւն ի սուտ մարգարէիցն, որ գան առ ձեզ հանդերձիք ոչխարաց և ի ներքոյ են գայլ ք յափշտակողք». Մատթ. Է 15:

ան հրապոյրներովը ընտիրները փորձով ճանչցուին: Վասն զի առաքեալը ընտիր մարդիկ կանուանէ չէ թէ հերետիկոսութեան համար հաւատքնին ձգողները, թէ՛ եւ ասոնք իրենց կողմը կը քաշեն նոյն առաքելոյն ուրիշ տեղ ամէն բան քննեցէք ու աղէկը ընդունեցէք ըսելը<sup>1</sup>, որպէս թէ չկրնար ըլլալ, որ մարդ աղէկ չքննելու եւ խաբուելով գէշը ընդունելու կարող եղած ըլլայ:

- Ե. Առաքեալը հերձուածներու եւ երկպառակութիւններու դէմ խօսելով, որոց գէշ բան ըլլալը մարդ չուրանար, եւ անոնց ետեւէն անմիջապէս հերետիկոսութիւնները կցելով կը վկայէ, որ ասոնք ալ գէշ եւ մեծ գէշ կը սեպէ, վասն զի հերձուած եւ երկպառակութիւններ ծագելուն պատճառ կը ցուցնէ հերետիկոսութիւն անգամ ծագելիքը: Մեծ գէշութեան մը ըլլալիքը անկէց թեթեւ գէշութեան մը ըլլալը իրեն հաւանական կը ցուցնէ: Անկէց առիթ կաննէ խրատելու, թէ պէտք չէ զօրատոր փորձանքներով ալ շփոթիլ, որուն նպատակն է հերետիկոսութեան չկրցած խախտած առաքինութիւնները փորձով երեւան հանել: Վերջապէս, թէ որ առաքելոյն խօսքին միտումն է միայն միութիւնը պահելը եւ ամէն հերձուածները եւ երկպառակութիւնները խափանելը, եւ թէ որ հերետիկոսութիւնները հերձուածներէն քիչ վնասակար չեն միութիւնը արելու, յայտնապէս կհետեւի, որ առաքեալը հերետիկոսութիւնն ու հերձուածը մէկ կարգ կը դնէ, ուստի հերետիկոսութիւնով բաժնուած մարդիկը ընտիր սեպելէն շատ հեռու է, մանաւանդ որ ամէն բաժանում կը դատապարտէ, եւ կը պատուիրէ, որ ամենուն խօսքը եւ միտքը մէկ ըլլայ, իսկ հերետիկոսութիւնը ասոր չներեր:
- Զ. Ասոր վրայ խօսք չերկնցընեմք, վասն զի նոյն առաքեալն է, որ հերետիկոսութիւնը մարմնոյ մեղքերուն կարգը կը դնէ Գաղատացոց թղթին մէջ<sup>2</sup>: Եւ Տիտոսի կը պատուիրէ, հերետիկոսի մը անգամ մը խրատ տալէն ետքը հեռանալ, վասն զի գլխէ ելած է, եւ ինքը զինքը դատապարտած է<sup>3</sup>: Սուրբն Պօղոս գրեթէ իր ամէն թուղթերուն մէջ մեզի կը պատուիրէ, որ պէտք է սուտ վարդապետութիւններէն փախչիլ, եւ այս անունով հերետիկոսութիւնները կիմացնէ, որոց պտուղ են սուտ վարդապետութիւնները:

<sup>1</sup> «Ձամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք». Ա Թեսաղ. Ե 21:

<sup>2</sup> Գաղատ. Ե 19, 20:

<sup>3</sup> «Յառնէ հերձուածողէ՛ յետ միանգամ եւ երկիցս խրատելոյ հրաժարեսցիր, գիտասցիր, զի թիրեալ է այնպիսին, եւ մեղանչէ անձամբ զանձն դատապարտեալ». Տիտոս Գ 10:

«Հերետիկոսությունը» հունարեն մեկ բառ է մը կեղև<sup>1</sup>, որ «ընտրել» ըսել է, վասն զի իրօք ալ հերետիկոսը իր հնարած կամ ընդունած վարդապետությունը ինք կընտրէ (6): Ասոր համար առաքեալը կըսէ, թէ՛ հերետիկոսը ինքը զինքը դատապարտած է, վասն զի զինքը դատապարտող վարդապետությունը ինքն է ընտրած: Իսկ մեզի հրաման չկայ ոչ նոր բան մը հնարելու եւ ոչ ալ ուրիշի հնարածներէն ընտրելու: Հեղինակ ունիմք Տեառն մերոյ առաքեալները, որ իրենք ալ բան մը ոչ հնարեցին եւ ոչ ընտրեցին, այլ Յիսուս Քրիստոսէ սովորած վարդապետություննին հաւատարմութեամբ տիեզերաց ամենդեցին: Ուսի երկինքէն հրեշտակ մըն ալ գար մեզի ուրիշ ւետարան քարոզելու, անոր ալ անէծք կը կարդայինք<sup>2</sup>: Սուրբ Հոգին մեզի առաջուց գուշակած էր, որ մոլորութեան հրեշտակը լուսոյ հրեշտակի կերպարանք մտնելով Փիլումենա կոյսը պիտի պաշարէ: Անոր կախարդական գործքերը Ապեղէսի նոր հերետիկոսություն մը հնարել տուին (7):

- Է. Ասոնք հետաքրքիր մարդոց ականջը կախարդելու համար արտաքին գիտութենէ առաջ եկած մարդկային եւ դիւական վարդապետություններ են (տե՛ս Ա Տիմ. Դ 1, Բ Տիմ. Դ 3): Տերն մեր այս իմաստությունը յիմարություն սեպեց/Ա Կորնթ. Ա 27/, եւ աշխարհի յիմարություն սեպածը ընտրեց փիլիսոփայությունը խայտառակելու համար: Աստուծոյ բնութիւնն ու անոր վճիռները կշռելու եւ խորունկը հասնելու յանդգնութեամբ ձեռք զարնող փիլիսոփայությունը այն արտաքին գիտութեան նիւթ պատրաստեց: Մէկ խօսքով ըսեմ. ամէն տեսակ հերետիկոսությունները թելադրողն անիկայ է: Անկէջ կուգան էոնները<sup>3</sup> եւ չգի-

<sup>1</sup> Այս բառն է *ai[resis*. Էրէզիս:

<sup>2</sup> «Թէ մեք կամ հրեշտակ յերկնից ւետարանեսցէ ձեզ ւելի քան զոր ւետարանեսցան ձեզ, նզովեալ լիցի». Գաղատ. Ա 8: Բողոքականները առաքելոյն այս խօսքը ծուռ կը մեկնեն, եկեղեցոյ անգիր ամենութիւնները չընդունելու համար այս խօսքէս իրենց իրաւունք գտնել կը կարծեն, և ինչ բան, որ սուրբ առաքելոյս, կամ ուրիշ առաքեալներուն գրուածներուն, կամ Աւետարանին մէջ գրուած չէ նէ՛ չեն ընդունիր, թէ և ամէն քրիստոնէից եկեղեցի անյիշատակ ժամանակէ ի վեր նոյնը ընդունած ըլլայ: Այն չեն նայիր, որ սուրբ առաքեալը իրենց գրածէն ւելի քարոզողին չէ՛, իրենց բերնով քարոզածէն ւելիին դէմ նզովք կը կարդայ: Ավետարանել բառը ոչ Սուրբ Գրոց և ոչ ուրիշ գրքերու մէջ ւետարան գրել ըսել չէ:

<sup>3</sup> Գնոստիկյան աղանդաւորները Վաղենտիոս անուն փիլիսոփայի մը առաջնորդութեամբ իրարմէ ծնած խել մը աներետոյթ և անմարմին, և աստուածային զօրութեան հաղորդ էակներ կայ ըսել հնարեցին, և ասոնց անունը էոն ըսին:



տեմ ինչ անճոռնի ձեւեր, եւ Վաղենտինոսի, որ ատեն մը պղատոնական էր (8), հնարած մարդկային երրորդութիւնը<sup>1</sup>: Ասկէց է Մարկիոնի դաւանած բարի եւ անհոգ աստուածը (10), որ ստոհկեաններուն հնարքն է (11): Եպիկուրեանները կը սովորեցնեն, թէ հոգին կը մեռնի (12): Փիլիսոփայութեան ամէն աղանդները մարմնոց յարութիւն առնելը ուրանալու միաբան են: Աստուած եւ նիւթը մէկ բան կարծելը Ջենոնի վարդապետութիւնն է: Կրակը Աստուած է ըսողը Հերակլիդէսի կը հետեւի (13): Փիլիսոփաներն ու հերետիկոսները մի եւ նոյն պրոճուկ խնդիրներու մէջ կիյնան: Չարը ի՞նչ է, ինչու՞ համար կայ, մարդս ուրկէ՞ց է, եւ ինչպէ՞ս եղած է: Քիչ ժամանակ առաջ Վաղենտինոսի հնարած հարցմունքն ալ թէ Աստուծոյ ծագումը որկէց է, ասոր պէս է: Եւ անոր ըսածին նայինք նէ՛ ասիկայ մտածութիւն մը եւ վիժած մըն է (14):

Արիստոտելը կը մեղքընամ, որ ասոնց համար հակաճառութիւն է հնարեր. այն վիճելու արհեստը, որ քակելու եւ շինելու հաւասար զօրութիւն ունի, իր դրութիւններուն մէջ Պրօտէոս մը<sup>2</sup>, հետեւանքներուն մէջ ալ, ենթակայները ընտրելուն մէջ ալ անճոռնի եւ այլանդակ, ինքն իրեն հակառակ, որ միշտ իր շինածը ինքն կարէ (15): Ասկէց են այն «առասպելները, այն ազգաբանութիւնները, որոց վերջը չգար, այն սնոտի խնդիրները, քաղցկեղի պէս ճարակ գտնող խոսքերը» (Ա Տիմ. Ա 4, Տիտ. Գ 9, Բ Տիմ. Բ 17), որոնցմէ առաքեալը մեզ զգուշացնել կուզէ, որ առ Կողոսացից գրած նամակովը կը խրատէ, որ փիլիսոփայութեան դէմ զգուշութիւնը ձեռքէ չը ձգեմք<sup>3</sup>, Չգոյշ կեցիք, կըսէ,

<sup>1</sup> Պղատոն աստուածային էութեան մէջ երրորդութիւն մը կը ճանչնար, բայց քրիստոնէից գիտցածէն շատ տարբեր, և փիլիսոփայական մտքի յարմարցում. անոր համար Տերտուլիանոս մարդկային երրորդութիւն կըսէ ասոր: Բողոքականներուն սոկինեան (9) և ինիզեր ըսուած ճիւղերը, որ Սուրբ Երրորդութեան չեն հաւատար, կըկարծեն, թէ քրիստոնեաները Սուրբ Երրորդութեան վարդապետութիւնը Պղատոնէն առած են: Ասոնք կամ քրիստոնէից Գիրքը կարդացած չեն, կամ Պղատոնի գիրքերը, և կամ դատում ընել չեն գիտեր:

<sup>2</sup> Հին առասպելներուն մէջ կեղծեալ մէկ մարդ մըն է, որ ամէն կերպարանք կմտնէ եղեր, հակաճառութեան կանոններն ալ միապէս կը յարմարին՝ ճշմարիտն ալ պաշտպանելու, սուտն ալ. անոր համար Տերտուլիանոս Պրօտետոսի կընմանեցընէ (16):

<sup>3</sup> Տերտուլիանոսի ըսածը իր ժամանակի փիլիսոփայութեան համար հասկընալու է: Ետքերը փիլիսոփայութիւնը քրիստոնէական կրօնից հետ համաձայնեցնելով չէ թէ միայն

չըլլայ որ մէկը ձեզ խաբէ փիլիսոփայութեամբ եւ մարդկան աւանդութիւններու համեմատ, եւ Սուրբ Հոգւոյն իմաստութեանը հակառակ խոսքերով: Աթենք գացեր էր առաքեալը, ուր ինքնին ճանչցեր էր այս արտաքին իմաստութիւնը, որ ճշմարտութիւնը կը խանգարէ եւ սովորեցնել կը պարծի, եւ տեսակ տեսակ աղանդներու բաժնուած է, որ որպէս թէ ամէնքն ալ մէկ մէկ հերետիկոսութիւն ըլլային իրարու դէմ երդուեալ թշնամի են:

Բայց Աթենք Երուսաղէմի հետ, եւ ակադեմիան եկեղեցւոյ հետ, եւ հերետիկոսները քրիստոնեաներուն հետ ինչ բան ունին (18): Մեր հետևած ուսմունքը Սողոմոնի սրահէն է (19), որ միամիտ եւ ուղիղ սրտիւ զԱստուած խնդրել սովորեցուցած է մեզի (Իմաստ. Ա 1): Ի՞նչ կը խորհին մեզի համար Ստոյիկեան կամ Պղատոնական կամ տրամաբանական փիլիսոփայութիւն մը հնարել ուզողները?:

(շարունակելի)

---

անվնաս, այլ եւ հաւատոյ պաշտպան ըլլալու պաշտօնն ունեցող անձանց հարկաւոր գիտութիւն մը ըրին: Եւ ասակ ալ ըլլալու է. վասն զի փիլիսոփայութեան առարկայն ճշմարտութիւն է, որ մեկ հատիկ կըրնայ ըլլալ. այն է քրիստոնէութեան սովորեցուցածը, և ճշմարտութիւնէ խոտորածը փիլիսոփայութիւն ալ չըլլար, կամ անճոռնի և իրար չբռնող անհաստատ դրութիւններու կուտակութիւն մը կըլլայ, կամ ամէն բանի, և ամէնուն ծանուցեալ ճշմարտութիւններու անգամ երկբայիլ սովորեցնող գիտութիւն մը կըլլայ, որ է կանոնի կերպարանքի տակ ծածկուած տգիտութեան դրութիւն: Ասանկ են հիմայ Եւրոպայի թերահաւատներուն փիլիսոփայութիւնները (17), որ տգէտ, բայց պերճախօս մարդոց ճառատանք կը նմանին:

- <sup>1</sup> «Զգոյշ լերուօ, մի՛ որ իցէ, որ զձեզ կողոպտիցէ ճարտարամտութեամբ եւ սնտի խաբէութեամբ, որ ըստ մարդկան աւանդութեան... եւ ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի». Կողոս. Բ 8:
- <sup>2</sup> Եկեղեցւոյ առաջին դարերուն հերետիկոսներուն մեծ փոյթը քրիստոնէութիւնը այն ժամանակի փիլիսոփայական դրութիւններուն յարմարցնել էր, և ասոնց դրութեան վրայ կը խօսի հեղինակը: Ուրիշ բան կըլլար թէ որ այն դրութիւնները քրիստոնէութեան յարմարցնել ուզէին. այն ատենը չյարմարած դրութիւնը իբրեւ սուտ դուրս կըծգէին, ինչպէս որ ըրին նոյն ժամանակի ուղղափառ հայրերը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- (1) Տերտուլիանոսի հոգևորական լինելու /«Տերտուլիանոս երէց». Հերոնիմոս, Վասն երեւելի արանց=De viris illis, ԾԳ/ խնդիրը լրջորեն վիճարկվում է. նրա երկերում ակնարկ իսկ չի արվում այդ մասին: Եվ հիրավի, շատ ավելի հավանական է ենթադրել, որ նա առհասարակ հոգևորական չի եղել/De orat. 20, De exhort. cast. , 7, De monogamia 12/. տե՛ս А. Столяров, Тертулиан. Эпоха, жизнь, учения. с. 14:
- (2) Այսօր հաստատված է, որ Տերտուլիանոսի «Նախագրություններ» -ը շարադրված է շուրջ 197-203 թթ. տե՛ս А. Столяров, Тертулиан, с. 19:
- (3) Այրիների և կույսերի դերի այսօրինակ կարևորումը բնորոշ էր վաղ եկեղեցական մտածողությանը (Կղեմես Հռոմեացի, Թուղթ առ Կորնթ. Խ 5, Պողիկարպոս Զմյուռնացի, Թուղթ առ Փիլիպ. Դ, ուր, ի դեպ, այրիները բնորոշվում են՝ «Աստծո սեղան»/. տե՛ս «Գանձասար», Աստուածաբանական հանդէս. Է, Եր. , 2002, էջ 169:
- (4) տե՛ս Բ Տիմ. Ա 15, Բ Տիմ. Ա 20: Հիշյալ Հերմոգենեսին «Մարմնի հարության մասին» երկում/24, 1/Տերտուլիանոսը հիշատակում է իբրև մարմնի հարությունը մերժող հերետիկոս:
- (5) Նկատի ունի Անգլիկան եկեղեցու բարենորոգիչ Թոմաս Քրանմերին /Cranmer/: Ծնվել է 1489 թ., եղել Քեմբրիջի համալսարանի աստվածաբանության պրոֆ.: Անգլիայի Հայնրիխ Ը արքայի և Եկատերինա Արագոնացու ամուսնալուծության խնդրով եղել է Հռոմում և Գերմանիայում: Գերմանիայում նա հանդիպում է բողոքական աստվածաբանների, համակրանքով զրուցում նրանց հետ: Վերադառնալով Անգլիա կարգվում է Քենթերբերիի արքեպիսկոպոս (1532 թ.): Նրա ազդեցությամբ Հենրիխ Ը-ն հարուցում է Անգլիայում պապի իրավական լիազորությունների խնդիրը: Անգլիկան հոգևորականության հավանությամբ Քրանմերը դառնում է բովանդակ Անգլիայի գահերեց արքեպիսկոպոս և մետրոպոլիտ: Նա փորձում էր Անգլիկան եկեղեցին բարենորոգել յուրօրինակության ոգով: Մեծ դժվարություններից հետո 1539 թ. նրա խմբագրությամբ և ներածականով հրատ. Աստվածաշնչի թարգմանությունը: Այնուհետև նա զբաղվեց ծեսի պարզեցմամբ: Նրա բացահայտ աջակցությամբ Անգլիայում իրենց գործունեությունն են իրականացնում բողոքականները, որոնցից ոմանք մասնակցում են ընդհանուր Աղթագրքի խմբագրման գործին, ինչպես նաև՝ 1548 թ. Ճառընտիր ժողովածուի կազմավորմանը, Մելանքտոնի գործակցությամբ 1552 թ. կազմում Անգլիկան եկեղեցու հավատո հանգանակը: Սակայն Մարիա թագուհու օրոք Քրանմերի եկեղեցական բոլոր բարենորոգումները ոչնչացվում են, և նա ենթարկվում է հալածանքի: Պապի կողմից 1556 թ. նա մեղադրվում է հերձվածի մեջ, իբրև հերետիկոս դատապարտվում մահապատժի: Այդ մասին իմա-

նալով՝ նա հրաժարվում է իր կրոնական համոզումներից և ընդունում պապի առաջնայնությունը: Բայց երբ, այդուհանդերձ, Մարիա թագուհին կարգադրում է մահապատժի ենթարկել նրան, Քրանները վերադառնում է իր նախկին հայացքներին. նա հայտարարում է. «Քանի որ իմ ձեռքն է մեղանշել՝ գրելով այն, ինչ հակառակ է իմ սրտին, ուստի առաջինը նա կայրվի, երբ մտնեմ խարույկի մեջ»: Քրանները մահապատժի ենթարկվեց 1556 թ. մարտի 22-ին. տե՛ս Н. Конский, Кранмер. Христианство Энци. т. 1, с. 831-832:

- (5ա) Մեռլո Դ, Օպինիե, Պատմություն վեշտասաներորդ դարու բարեկարգության ի Գերմանիա: Թարգմանեալ ի գաղղիական բնագրէ, հտ. Բ, Ջմյուննիա, 1848:
- (6) aifresis եզրի նշանակությունն իբրև հայացքների մասնավոր «համակարգ» վավերացված է տակավին անտիկ ավանդույթի մեջ. օր. Диоген. Лаерт. V 191 և այլուր:
- (7) Ապեղեսը Մարկիոնի աշակերտն էր, Բ դարավերջին ապրում էր Հռոմում: Նրա կյանքի վերաբերյալ տեղեկությունները, որ հաղորդում է Եվսեբիոս Կեսարացին/ Պատմութ. Ե 13/, չունեն այն սադրիչ մանրամասները, որոնք ներկա են Տերտուլիանոսի մոտ: Ապեղեսի գրչին է պատկանել Fanerwseis («Հայտնություն») երկը, ուր նա շարադրել է իր ընկերուհու՝ Ֆիլումենայի մարգարեությունները, ինչպես նաև, ամենայն հավանականությամբ, «Սիլլոգիզմներ» աշխատությունը, ուր քննադատվել է Մովսես նախամարգարեի աստվածաբանությունը (տե՛ս Կեղծ – Տերտուլիանոս, Adv haeres. 19): Վարդապետական հայեցակետից Ապեղեսը հեռացել է Մարկիոնի խստորոշ երկարմատյա ուսմունքից և ընդունել մեկ բացարձակ սկզբի գաղափարը: Ի տարբերություն Մարկիոնի Ապեղեսի ու նրա հետևորդների մտահայեցողության մեջ գնալով «ավելի է ուժեղանում միստիցիզմի և գնոստիկության ազդեցությունը» (տե՛ս Երվ. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Եր. , էջ 51): Տերտուլիանոսը գրել է մասնավոր մի երկասիրություն Ապեղեսի հետևորդների դեմ (Adv. Apelleiacos. ըստ De care Christi, 8), որը մեզ չի հասել:
- (8) տե՛ս Adv. Valent. 26, De testimonio Animaе, 21:
- (9) Բողոքականության սոկինյան /սոցինյան/ ճյուղն իր անունը ստացել է այդ հոսանքի հիմնադիր Ֆաուստ Սոցինից (1539-1604 թթ.): Սոկինյաններն իրենց հակաերրոդութենական վարդապետությունը հիմնում են բացառապես Ս. Գրքի վրա, ուսուցանում, որ այն գրված է Ս. Հոգու թելադրանքով, սակայն դա ընդունելի էին համարում այնքանով, որ չհակասի մարդկային բանականությանը: Հին Կտակարանն ընդունում էին անտարբերությամբ, քանզի վստահ էին, թե մարդու փրկության համար անհրաժեշտ ամեն ինչ տր-

- ված է Նոր Կտակարանում: Նրանք մերժում էին ադամական մեղքը, ինչպես նաև՝ բացառապես չարիք գործելու մարդու հակումը, որովհետև այդ պարագային նա վատ է վարվում ոչ իր մեղքով: Սրա հետ է կապված նրանց վարդապետությունը քավության մասին: Քրիստոս հայտնվել է ոչ թե Աստծուն մարդկանց հետ հաշտեցնելու, այլ՝ մարդկանց՝ Աստծո հետ: Բացառելով Քրիստոսի աստվածությունը՝ նրանք համարում էին, որ նա կատարյալ մարդ է, որը սակայն հասարակ ադամորդիներին գերազանցում է իր սրբությամբ: Աստված նրան տվել է աստվածային զորություն, ուստի անհրաժեշտ է պաշտել նրան, որպես Աստծո: Ըստ այսմ նրանք հետևողական պայքար էին մղում մյուս բոլոր հակաերրորդութենական հերձվածների դեմ, որոնք չէին ընդունում Քրիստոսի աստվածությունը: Ս. Հոգին նրանք ընկալում էին իբրև աստվածային զորություն: Հաղորդությունը համարում էին լոկ իբրև հիշողություն Քրիստոսի մահվան մասին: Պնդում էին, թե հարությունը լինելու է ոչ թե մարմնով, այլ՝ հոգով: Նրանց հավատո հանգանակը լույս է տեսել 1605 թ. լեհերեն Ռակով քաղաքում, 1609 թ. լույս է տեսնում դրա լատիներեն թարգմանությունը: Առավել նշանավոր սոկինյանների երկերը լույս են տեսել Bibliotheca Fratrum Polonorum մատենաշարում . տե՛ս Н. Н. Любович, Социн Фауст. Социнианство – Христианство. Энци. т. 2, М, 1995, с. 618-620:
- (10) լատ. Աստվածը, որ լավագույնն է իր անվրդովության պատճառով փխ. դաւանած...աստուածը:
- (11) Ըստ երևոյթին ակնարկ է ստոիկյան իմաստունի վերաբերյալ, ով Աստծո նման անվրդով է:
- (12) տե՛ս Диоген. Лаерт. X 65: Հոգին մահկանացու են համարել Դեմոկրիտը/φραг. 466 հրատ. Лурье/ և Միջին Ստոիայի հիմնադիր Պանետիոսը/Цицерон, Тускуланские беседы, I, 32, 79/: Տերտուլիանոսը հոգին համարում էր անմահ, սակայն ստոիկների նման՝ մարմնավոր ու ենթակա տանջանքների (տե՛ս De testimonio Animae., 5. 25, De carne Christi, 10 և շար.):
- (13) Նկատի ունի գոյի նյութականության մասին ստոիկյան վարդապետությունը, որն իր իմաստասիրական ձևակերպումը ստացել է, ամենայն հավանականությամբ, տակավին դպրոցի հիմնադիր Ջենոնի կողմից: Ստոիկների մարմնավոր-հրե աստված-լոգոսը հիշեցնում էր Հերակլիտեսի հրե լոգոսը:
- (14) Համապատասխանում է հուն. evnduvmhsis /«միտք»/ և e[ktwma/ տառացիորեն՝ «վիժվածք»/ Վաղենտինոսը այսպես է բնորոշում վերջին՝ երեսուներորդ էոնը, այսինքն՝ Քրիստոսին/ տե՛ս աստ ԼԴ, Valent. 9-11, Ieronim. I Com. in Amos. 3/:
- (15) լատ. Դատողությունների մեջ կեղծավոր, հղումների մեջ ճարպիկ, ապացույցների մեջ թերի, վիճաբանության մեջ գործուն, ծանր նույնիսկ ինքն

- իր համար, ամեն ինչ մեկնաբանող, բայց և ոչ մի բան չբացատրող փխ. իր դրությամբներուն մէջ Պրոտէստ...իր շինածը ինքը կարէ
- (16) «Պրոտէստ» (Պրոտէստ). հունական առասպելներում ներկայանում է իբրև ծովային չաստվածություն: Որպէս Պոսեյդոնի որդի Պրոտէստն օժտված է ծովային աստվածություններին բնորոշ գծերով՝ ծերությամբ, բազմազավակությամբ, բազմագիտությամբ, տարբեր կերպարանքներ (առյուծ, հովազ, օձ, ցուլ և այլն) ընդունելու կարողությամբ: Պրոտէստը քողարկում է իր մարգարեական շնորհը բոլոր նրանցից, ովքեր չեն կարողանում որսալ նրա իրական կերպարանքը. տե՛ս Գ. Վ. Гусейнов, Протей- Мифы народов мира, т. 2, М., 1995, с. 342:
- (17) «Երոպայի թերահաւատներուն փիլիսոփայութիւնները» ասելով Տերոյենցը անկասկած նկատի ունի նախևառաջ կանտյան և նորկանտյան փիլիսոփայության հետևորդներին, ովքեր առաջնորդվում էին «Non possumus» = «Ես չգիտեմ պատասխանը» ազնոստիկյան նշանաբանով. տե՛ս Кант и кантианцы, М., 1978, с. 5: Կանտյան վարդապետությունից է սնվում և բողոքական աստվածաբանությունը (Ա. Սարգսյան, Ռացիոնալ աստվածաբանության կանտյան քննադատությունը և արդիականությունը, « Բանբեր Երևանի Համալսարանի» 1976, 3, էջ 189):
- (18) Quid ergo Athenis et Hierusalymis quid Academiae et Ecclesiae. տառացիորեն՝ «Արդ, ինչ ընդհանուր բան կա Աթենքի և Երուսաղեմի, ի՞նչ՝ Ակադեմիայի ու Եկեղեցու միջև»: Տերտուլիանոսին բնորոշ արժեքների անվերապահ և կտրուկ հակադրման այս եղանակը կիրառված է նաև նրա «Ջատագովության» մեջ. «Ի՞նչ ընդհանուր բան կա փիլիսոփայի և քրիստոնյայի միջև, Հունաստանի աշակերտի և երկնքի աշակերտի միջև, ճշմարտությունը փնտրողի և հավիտենական կյանքը փնտրողի միջև». Apol. 46:

**Բանալի բառեր** - Հովհաննես Տերոյենց, Հայ Եկեղեցի, բողոքականություն, Աստվածաշունչ, հրեական կանոն, Սրբազան ավանդություն, մեկնաբանություն:

## ОВАНЕС ТЕРОЕЦ КАК ПЕРЕВОДЧИК СОЧИНЕНИИ ТЕРТУЛЛИАНА "ВВЕДЕНИЕ"

*Акоп Кյոսеян*

**Ключевые слова:** Ованеса Тероец, Армянская Церковь, протестантизм, Библия, еврейский канон, Святое Предание, толкование.

В статье дается общее описание борьбы Ованеса Чамурчяна (Тероец, 1801-1888) против протестантизма. Опираясь на Библию и на труды Отцов

Церкви, он отрицает протестантскую позицию, согласно которой истинный канон Библия является исключительно еврейский. А с другой стороны, он показывает, что некоторые книги и отрывки, которые сегодня отсутствуют в еврейском каноне, когда-то были частью еврейского канона и были переведены на греческий. В связи с различными проблемами канона и толковании Святой Библии Тероенц переводит сочинение Тертулиана и доказывает, что только те, которые знают Святое Предание, имеют право толковать Библию.

### HOVHANNES TEROENTS AS A TRANSLATOR OF TERTULLIAN ESSAY "INTRODUCTION"

*Hakob Qoseyan*

**Key Words:** *Hovhannes Teroents, Armenian Church, Protestantism, Bible, Hebrew Canon, Holy Tradition, introduction.*

The article gives a General description of the struggle of Hovhannes Chamurchyan (Teroents, 1801-1888) against Protestantism. Based on the Bible and the writings of the Church Fathers, it denies the Protestant position that the true Canon of the Bible is exclusively Jewish. On the other hand, it shows that some books and passages that are missing from the Hebrew Canon today were once part of the Hebrew Canon and were translated into Greek. In connection with various problems of the Canon of the Holy Bible, Teroents translates Tertulian's work and proves that only those who know the Holy Tradition have the right to interpret the Bible.